

ք. Երևան

02.02.2024թ.

Առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող Նունե Բակունցի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N° 2323-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Հանրային առողջության պահպանում» ծրագրի ապահովման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է 2024 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Հանրային առողջության պահպանում» ծրագրի «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ» միջոցառման (Ծրագրի միջոցառում) իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել՝ մինչև 2,395,391,000.0 (երկու միլիարդ երեք հարյուր իննսունհինգ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագրի միջոցառումն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումը և դրա ծառայությունների ու հետազոտությունների ցանկը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված N°1-ում, վճարման ժամանակացույցը՝ Հավելված N° 2-ում, ծառայությունների միջինացված գները՝ Հավելված N° 7-ում (կցվում են Excel ֆայլով):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագրի միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի միջոցառումների իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի միջոցառումներով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների

իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրի միջոցառումներով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրի միջոցառումներով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրի միջոցառումներով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Ծրագրի միջոցառման մասին սույն պայմանագրի 2.4.4. կետում նշված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել, դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն, իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի միջոցառման շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրի միջոցառումով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, ընդ որում ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

- աշխատավարձ,
- հարկային պարտավորություններ,
- դեղերի և բժշկական նշանակության պարագաների, ապրանքների գնում,
- Այլ գործառնական և վարչական ծախսեր.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Ծրագրի միջոցառման մասին աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություններ՝ (ամսական/տարեկան)՝ Հավելված N° 3-ի, ֆինանսական հաշվետվության (ամսական/տարեկան)՝ Հավելված N° 4-ի, վճարման հայտի (ամսական)՝ Հավելված N° 5-ի:

Նշված հավելվածներով ներկայացվող հաշվետվությունների վերջնաժամկետները սահմանվում են Հավելված N° 6-ում.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին

հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. Ծրագրի միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8 սույն պայմանագրի Ծրագրի միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, այդ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնելու պետական բյուջե, ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրի միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են Ծրագրի միջոցառման իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրի միջոցառումներով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և Ծրագրի միջոցառումով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված Ծրագրի միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Ծրագրի միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, իրականացման ժամկետով տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6.2. Պայմանագրով նախատեսված միջոցառումները ավարտվում, դրանց հետ կապված

տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվում և դրանց իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները հաշվարկվում են մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Կառավարության կողմից հաստատված Ծրագրի միջոցառումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին՝

Կազմակերպություն՝

Առողջապահության նախարարություն

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Կառավարական շենք 3
Ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011001873
ՀՎՀՀ 02507171

ք. Երևան, Հերացի 12
Ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503

Առողջապահության նախարարության
գլխավոր քաղաքական

Գլխավոր տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Վարդանուշ Գրիգորյան
(ստորագրություն)

Նունե Բակունց
(ստորագրություն)



ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
01.01.2024թ.-25.12.2024թ.-ի ժամանակահատվածի աշխատանքային պլան

Իրականացվելիք Ծրագրի միջոցառման							
N	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը			ակնկալվող կողմնորոշիչ արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը
			Ծառայությունների/հոտազոտությունների նկարագիր	Չափման միավոր	2024թ.-ի տարեկան կողմնորոշիչ թիվ/չափաքանակ		
1	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ապահովման նպատակով կատարվելիք հետազոտություններ և ծառայություններ	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ապահովման նպատակով կատարվելիք հետազոտություններ և ծառայություններ	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ոլորտում վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում՝ արագ արձագանքման գործողությունների իրականացում՝ վարակիչ հիվանդությունների բռնկումների և հիվանդության դեպքերի աճի, զանգվածային թունավորումների ժամանակ, բնակչության զանգվածային անընկալության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում, Միջազգային առողջապահական կանոնների (2005թ.) ներդրման և համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության համակարգում, կենսանվտանգության և կենսապահովության ապահովմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների, իր իրավասության սահմաններում լաբորատոր ռեֆերենս գործառույթների իրականացում, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների, ներառյալ ֆիզիկական, ազդեցության մոնիթորինգի կազմակերպում, հիվանդությունների և դրանց տարածման պատճառների ու պայմանների, փոխանցողները ներառյալ, մասնագիտական դիտարկումների, իրավիճակային վերլուծության և գնահատման, առողջ ապրելակերպի քարոզչության կազմակերպում, մասնագիտական դիտարկումների, ոլորտի իրավական ակտերի, ուսուցման մոդուլների մշակում:				25.12.2024թ.
2			Իրականացված հետազոտությունների թիվ	հատ	580142	580142	
3			Ստացված պատվաստանյութերի ընդհանուր դեղաչափերի թիվ	հատ	1067200	1067200	
4			Ախտահանման ենթակա տնային օջախների ընդգրկվածություն	տոկոս	95	95	
5			Ախտահանման ենթակա կազմակերպ օջախների ընդգրկվածություն	տոկոս	90	90	
6			Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակի հսկողության առանձին բաղադրիչների գնահատում	տոկոս	60	60	
7			Համաճարակաբանական հետազոտության ենթակա հիվանդությունների օջախների ընդգրկվածություն	տոկոս	99	99	
8			Բնական օջախների տարածքների կենդանամակաբուժաբանական հետազոտություններով ընդգրկվածություն	տոկոս	90	90	
9			Հետազոտված ջրականգների մասնաբաժին	տոկոս	90	90	
10			Վարակիչ հիվանդությունների ախտահանման ենթակա օջախներում ախտահանում իրականացնելու առավելագույն ժամկետ	ժամ	24	24	

11		Միջոցառումներ (ընդհանուր ծավալի մոտ 5 %-ը). 1. Իմունականխարգելման ոլորտում գործող հանձնաժողովների աշխատանքային հանդիպումների («Պոլիոմիելիտի, կարմրուկի և կարմրախտի սերտիֆիկացման ազգային հանձնաժողով», «Իմունականխարգելման հարցերով խորհրդատվական հանձնաժողով», «Իմունականխարգելման հանրապետական /միջգերատեսչական/ համակարգող հանձնաժողով») կազմակերպում, «Հետապտվաստումային անբարեհաջող դեպքերի գնահատման հանրապետական հանձնաժողով») կազմակերպում 2. Իմունականխարգելման ոլորտի վերաբերյալ խորհրդակցություններ, քննարկումներ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և այլ շահագրգիռ կառույցների հետ 3. Իմունականխարգելման վերաբերյալ դասընթացների կազմակերպում և իրականացում, ՀՄԶ-ների տրամադրման հայտի կազմում, դասընթացների նյութերի նախապատրաստում 3. Դասընթացների, քննարկումների, հանդիպումների կազմակերպում վարակիչ հիվանդությունների (հատուկ վտանգավոր, ոչ կառավարելի օդակաթիլային, աղիքային) համաճարակաբանության ոլորտին առնչվող կանխարգելման հարցերով հանդիպում, 4. Դասընթացների, քննարկումների, հանդիպումների կազմակերպում փոխանցողով պայմանավորված և մակաբուծային հիվանդությունների համաճարակաբանության ոլորտին առնչվող՝ լեյշմանիոզի, Լայմի հիվանդության, մալարիայի կանխարգելման հարցերով հանդիպում, 5. Լաբորատոր ոլորտը կանոնակարգող թեմատիկ դասընթացների կազմակերպում՝ մանրէաբանական, վիրուսաբանական, մակաբուծաբանական, հատուկ վտանգավոր վարակների վերաբերյալ, կենդանի կուլտուրաների թանգարանի վարման, քիմիական և ճառագայթաբանական, էպիզոոտոլոգիական, էնտոմոլոգիական, էկոտմակաբուծաբանական, թունաբանական լաբորատոր հետազոտական, որակի կառավարման, կենսանվտանգության/կենսապահովության վերաբերյալ				
----	--	--	--	--	--	--

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան, Կառավարական տուն 3

Բանկ՝ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

Հ/Հ 900011001873

ՀՎՀՀ 02507171

ԱՆ գլխավոր քարտուղար՝

_____ Վարդանուշ Գրիգորյան
(ստորագրություն)

Կազմակերպություն

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12,

Բանկ՝ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի գործառնական
վարչություն

Հ/Հ 900018004649

ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրենի ժամանակավոր
ստորագրություն՝


(ստորագրություն)

Նունե Բակունց



Հավելված 2
N ԱՆ ԴՏՊ-ՀՎԿԱԿ-1 պայմանագրի

Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին 2024 թվականի Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ապահովման համար հատկացվող դրամաշնորհի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ամիսը	Գումարը (հազ. դրամ)
1	Հունվար	479,078.20
2	Փետրվար	479,078.20
3	Մարտ	479,078.20
4	Ապրիլ	1,101,879.9
5	Մայիս	1,101,879.9
6	Հունիս	1,101,879.9
7	Հուլիս	1,724,681.5
8	Օգոստոս	1,724,681.5
9	Սեպտեմբեր	1,724,681.5
10	Հոկտեմբեր	2,395,391.0
11	Նոյեմբեր	2,395,391.0
12	Դեկտեմբեր	2,395,391.0
	Ընդամենը	2,395,391.0

Պետական մարմին՝

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ Բ.Երևան, Կառավարական շենք 3
Բանկ՝ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

Հ/Հ 900011001873

ՀՎՀՀ 0250717

ԱՆ գլխավոր քարտուղար

(ստորագրություն)

Կազմակերպություն՝

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12,

Բանկ՝ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

Հ/Հ 900018004649

ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Նունե Բալունց

(ստորագրություն)

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն (ամսական/տարեկան)
. 2024թ.- . 2024թ.-ի ժամանակահատվածի համար

N	Ծառայության/հետազոտության անվանումը	Չափման միավոր	Գին (ՀՀ դրամ)	2024թ.-ի կողմնորոշիչ թվաքանակ/չ արիաքանակ	2024թ.-ի փաստացի թվաքանակ/չ արիաքանակ	Ընդամենը գումար (հազար դրամ)	Շեղումների բացատրություն, լրացվում է տարեկան արդյունքների համար
1	2	3	4	5	6	7	8
1							
2							


*«Գին» և «Ընդամենը գումար» (4 և 7) սյուների կարող են չլրացվել

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Կառավարական տուն 3,
Բանկ՝ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Հ/Հ 900011001873
ՀՎՀՀ 02507171

ԱՆ գլխավոր քարտուղար՝




Կազմակերպություն

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12,
Բանկ՝ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի գործառնական
վարչություն

Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝



Ֆինանսական հաշվետվություն
(ամսական, տարեկան)

Կազմակերպության անվանում

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ծրագրի միջոցառման անվանում

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ

Դրամաշնորհի հատկացման պայմանագրի համար

UL 757-4444-1

Հաշվետու ժամանակահատված

. 2024թ.- . 2024թ.

Պահանջվող գումարի ժամանակահատված

ՀՀ դրամ

N	Ընդամենը բյուջե՝ դրամաշնորհային միջոցներ	Ընդամենը փաստացի ծախսեր	Ընդամենը բյուջեի և ընդամենը փաստացի կատարված ծախսերի տարբերություն	Դիտողություններ, տարբերությունների հիմնավորումներ
1	2	3	4=2-3	5
1			0	
Ընդամենը		0	0	0

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՄԻՆ

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան, Կառավարական տուն 3

Բանկ՝ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն

CLC 900011001873

444 02507171

ԱՆ գլխավոր քարտուղար՝

Կազմակերպություն

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12,

Բանկ՝ ֆինանսների նախարարության կենտրոնական
գանձապետարանի գործառնական վարչություն


C/C 900018004649

<4<< 02625503

Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝


Հարգանք Գրիգորյան

1990



Նունե Բալյունց

(ԿՆՈՒՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)



Պահանջվող հաշվետվություններ և վերջիններիս ներկայացման վերջնաժամկետների ժամանակացույց

N	Անվանում	Հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ
Ամսական հաշվետվություններ		
1	Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն՝ Հավելված 3, ֆինանսական հաշվետվություն՝ Հավելված 4	Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, ոչ ուշ քան 5-րդ աշխատանքային օրը
Տարեկան		
2	Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն (տարեկան)՝ Հավելված 3, ֆինանսական հաշվետվություն՝ Հավելված 4 (տարեկան)	Մինչև դեկտեմբերի 25-ը ժամանակաշրջանի ավարտից հետո

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան, Կառավարական տուն 3


Բանկ՝ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Հ/Հ 900011001873

ՀՎՀՀ 02507171

ԱՆ գլխավոր քարտուղար՝


Ն. Հովհաննիսյան
(ստորագրություն)



Կազմակերպություն

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ


Հասցե՝ ք.Երևան, Հերացի 12,

Բանկ՝ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Հ/Հ 900018004649

ՀՎՀՀ 02625503

Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝


Նունե Բալյունց
(ստորագրություն)



Հավելված 7
N ԱՆ ԴՏՊ-ՀՎԿԱԿ-1
պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ԳՆԵՐ

h/h	Աշխատանքների և ծառայությունների անվանում	չափի միավոր	միավորի գին/դրամ
	Լաբորատոր հետազոտություններ	-	-
	<i>Մանրէաբանական հետազոտություններ</i>	-	-
1	Ռեկրեացիայի գոտիների ջրերի նմուշներում ընդհանուր կոլիձև մանրէների առկայության որոշում	հետազոտություն	2,200.0
2	Ջրի նմուշում աղիքային ախտածին մանրէների և ջրային ծագման բռնկումների այլ հարուցիչների հայտնաբերում	1 ցուցանիշ / 1 հետազոտություն	7,000.0
3	Ջրի նմուշում ախտածին ստաֆիլակոկի հայտնաբերում	հետազոտություն	2,200.0
4	Ջրի նմուշում կոլիֆագերի առկայության և քանակության որոշում	հետազոտություն	5,400.0
5	Հողի նմուշում աղիքային ցուպիկի խմբի մանրէների ինդեքսի որոշում, էնտերակոկների ինդեքսի որոշում և աղիքային ախտածին մանրէների հայտնաբերում	1 ցուցանիշ / 1 հետազոտություն	1,900.0
6	Խմելու ջրի նմուշում մանրէների ընդհանուր թվի որոշում	հետազոտություն	1,100.0
7	Խմելու ջրի նմուշում ընդհանուր կոլիձև մանրէների հայտնաբերում	հետազոտություն	2,300.0
8	Ջրի նմուշում ջերմատուլերանտ կոլիձև մանրէների հայտնաբերում	հետազոտություն	1,200.0
9	Արտաքին միջավայրից վերցված լվացուկներում ԱՅԽՄ-ի, Պսևդամոնաս աէրադինոգայի, ախտածին ստաֆիլակոկի որոշում	1 ցուցանիշ / 1 հետազոտություն	500.0
10	Արտաքին միջավայրից վերցված լվացուկի նմուշում աղիքային ախտածին մանրէների և պայմանական ախտածին մանրէների որոշում	1 ցուցանիշ / 1 հետազոտություն	600.0
11	Մանրէագերծման որակի հսկողություն (2 հետազոտությամբ)	1 հետազոտություն	700.0
12	Հետազոտություններ սննդային թունավորումների ժամանակ (սննդամթերքում և կենսաբանական նյութի նմուշում (էնտերոախտածին աղիքային ցուպիկներ (նաև աղիքային վարակների հիվանդների մոտ), ախտածին ստաֆիլակոկ, բացիլուս ցերեուս, էնտերակոկ, աղիքային ախտածին մանրէներ, կամպիլոբակտեր, յերսինիա, պրոտեուս, և այլն)) և ըստ ստանդարտների պահանջների (լիստերիա մոնոցիտոգենես, կոստրիբոնես և արքիոնես)	1 ցուցանիշ (հարուցիչ) /	5,500.0
13	Հետազոտություններ սննդային թունավորումների ժամանակ (սննդամթերքում և կենսաբանական նյութի նմուշում (ախտածին ստաֆիլակոկ))	1 նմուշ / 1 հետազոտություն	3,600.0
14	Սննդամթերքի նմուշում աղիքային ցուպիկի խմբի մանրէների հայտնաբերում և քանակության որոշում (համաձայն ԳՕՍՏ-ի ԻՍՕ-ի)	հետազոտություն	3,900.0

15	Մենդամթերքի նմուշում B. cereus-ի հայտնաբերման և առավել հավանական ռանսկուռության որոշում (համաձայն ԳՕՍՏ-ի, ԻՍՕ-ի)	հետազոտություն	5,500.0
16	Մենդամթերքի նմուշում E. coli-ի հայտնաբերման և քանակության որոշում (համաձայն ԳՕՍՏ-ի, ԻՍՕ-ի)	հետազոտություն	4,200.0
17	Մենդամթերքի նմուշում օդակյաց և ֆակուլտատիվ անօդակյաց մանրէների ռանսկուռության որոշում (համաձայն ԳՕՍՏ-ի, ԻՍՕ-ի)	հետազոտություն	4,000.0
18	Մենդամթերքի նմուշում ախտածին մանրէների, այդ թվում սալմոնելաների հայտնաբերում (համաձայն ԳՕՍՏ-ի, ԻՍՕ-ի)	հետազոտություն	5,800.0
19	Մենդամթերքի նմուշում կոագուլազադրական ստաֆիլակոկների և S. aureus-ի հայտնաբերում և ռանսկուռության որոշում (համաձայն ԳՕՍՏ-ի, ԻՍՕ-ի)	հետազոտություն	3,900.0
20	Մենդամթերքում խմորասնկերի և բորբոսասնկերի որոշում (համաձայն ԳՕՍՏ-ի, ԻՍՕ-ի)	հետազոտություն	3,300.0
21	Աղիքային վարակի հարուցչի հայտնաբերում՝ հիվանդ և կոնտակտավոր	1 նմուշ / 1 հետազոտություն	2,700.0
22	Հետազոտություն աղիքային վարակների մանրէակրության վերաբերյալ (սալմոնելոզ, շիգելոզ, որովային տիֆ և պարատիֆեր)	1 նմուշ / 1 հետազոտություն	1,200.0
23	Ախտածին ստաֆիլակոկի հայտնաբերում (քթի քսուկում և կղանքում)	1 նմուշ / 1 հետազոտություն	900.0
24	Կապույտ հազի և մանրէային մենինգիտների մանրէաբանական ախտորոշում	1 վարակ / 1 նմուշ /	3,600.0
		1 հետազոտություն	
25	Դիֆթերիայի մանրէաբանական ախտորոշում	1 նմուշ / 1 հետազոտություն	3,900.0
26	Դիֆթերիայի մանրէաբանական ախտորոշում՝ հարուցչի տեսակի որոշմամբ և հաստատմամբ	1 նմուշ / 1 հետազոտություն	23,900.0
27	Հակաբիոտիկների նկատմամբ զգայունության որոշում	1 կուլտուրա / 1 հետազոտություն	1,800.0
28	Հակաբիոտիկների նկատմամբ կայունության որոշում	1 կուլտուրա / 1 հետազոտություն	1,400.0
29	Հակաբիոտիկների նկատմամբ զգայունության որոշում (1 E-թեսթ)	հետազոտություն	4,900.0
30	Արյան հետազոտություն մանրէազերծության (արյան հունի վարակների) և որովայնային տիֆի/պարատիֆերի վերաբերյալ	1 վարակ / 1 հետազոտություն	5,800.0
31	Մանրէային կուլտուրաների տարբերակում, հաստատում և/կամ նույնականացում (բացառությամբ հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների)	1 կուլտուրա	7,700.0
32	Կենսաբանական փորձ՝ բոտուլիզմի չեզոքացման ռեակցիա (պոլիվալենտ)	1 նմուշ / 1 հետազոտություն	16,000.0
33	Կենսաբանական փորձ՝ բոտուլիզմի չեզոքացման ռեակցիա (մոնովալենտ)	1 նմուշ / 1 հետազոտություն	22,000.0
34	Մնուցող միջավայրերի որակի հսկողություն՝ որակական հետազոտությամբ (1 սնուցող միջավայր)	հետազոտություն	5,300.0
35	Մնուցող միջավայրերի որակի հսկողություն՝ քանակական հետազոտությամբ (1 սնուցող միջավայր)	հետազոտություն	9,300.0
36	«Ա» խմբի ստրեպտոկոկի հակածնի հայտնաբերում բկանցքի քսուքում (իմունոքրոմատոգրաֆիկ թեստ)	1 նմուշ / 1 հետազոտություն	3,000.0

37	Լեզգիոնելոզի ախտորոշում մեզի նմուշի հետազոտմամբ (իմունոքրոմատոգրաֆիկ թեստ)	1 նմուշ / 1 հետազոտություն	8,900.0
38	Կլոստրիդիում դիֆիցիլե-ի հակաձնի, «Ա» և «Բ» թույների առկայության որոշում կղանքում	1 նմուշ / 1 հետազոտություն	5,800.0
39	Հելիկոբակտեր պիլորի-ի հակաձնի արագ հայտնաբերում կղանքում	1 նմուշ / 1 հետազոտություն	3,000.0
40	Արյան շիճուկի հետազոտություն յեսրինիոգային հակաձինների հայտնաբերման նպատակով	1 նմուշ / 1 հետազոտություն	9,500.0
41	Արյան շիճուկի հետազոտություն որովայնային տիֆի և պարատիֆերի հարուցիչների հակաձինների հայտնաբերման նպատակով	1 նմուշ / 1 հետազոտություն	7,100.0
42	ՊՇՌ հետազոտություն լեզգիոնելոզի հարուցիչ ԴՆԹ-ն հայտնաբերելու վերաբերյալ	1 նմուշ / 1 հետազոտություն	10,900.0
43	Էշերիխիոզի հարուցիչների ԴՆԹ-ի հայտնաբերում ՊՇՌ մեթոդով (նաև մանրէային կուլտուրայի հաստատում)	1 նմուշ / 1 հետազոտություն	12,500.0
44	Յերսինիոզների հարուցիչների ԴՆԹ-ի հայտնաբերում ՊՇՌ մեթոդով (նաև մանրէային կուլտուրայի հաստատում)	1 նմուշ / 1 հետազոտություն	8,500.0
45	Մենինգիտների ՊՇՌ ախտորոշում (նաև մանրէային կուլտուրայի հաստատում)	1 նմուշ / 1 հետազոտություն	16,100.0
46	Կապույտ հազի հարուցիչ ԴՆԹ-ի հայտնաբերում ՊՇՌ մեթոդով (նաև մանրէային կուլտուրայի հաստատում)	1 նմուշ / 1 հետազոտություն	11,100.0
47	ՊՇՌ հետազոտություն Neisseria meningitidis, Haemophilus influenzae -ի շճատիպավորման/շճախմբավորման նպատակով (նաև մանրէային կուլտուրայի հաստատում)	1 նմուշ / 1 հետազոտություն	22,000.0
48	Սուր աղիքային վարակների (շիգելոզ, սալմոնելոզ, կամպիլոբակտերիոզ) հարուցիչ(ների) ԴՆԹ-ի հայտնաբերում ՊՇՌ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	12,500.0
49	Որովայնային տիֆի հարուցիչ ԴՆԹ-ի հայտնաբերում ՊՇՌ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	17,800.0
50	Սննդամթերքի նմուշից Շիգելա ցեղի մանրէների և EIEC ԴՆԹ-ի հայտնաբերում ՊՇՌ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	20,100.0
51	Մանրէների մոտ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության մեխանիզմների հայտնաբերում ՊՇՌ մեթոդով՝ MDR KPC/OXA-48	1 կուլտուրա / 1 հետազոտություն	12,700.0
52	Մանրէների մոտ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության մեխանիզմների հայտնաբերում ՊՇՌ մեթոդով՝ MDR MBL	1 կուլտուրա / 1 հետազոտություն	14,300.0
53	Մանրէների մոտ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության մեխանիզմների հայտնաբերում ՊՇՌ մեթոդով՝ MRSA-սкрин-тип	1 կուլտուրա / 1 հետազոտություն	12,500.0
54	Օդային միջավայրի մանրէաբանական հետազոտություն՝ մանրէների ընդհանուր թիվ, ոսկեգույն ստաֆիլակոկ, բորբոսասնկեր և խմորասնկեր և այլ սանիտարազուգադրական մանրէներ	1 ցուցանիշ / 1 հետազոտություն	2,000.0
55	Կենսաբանական նյութի նմուշի (խորխ, մեզ, թարախ, էքսուդատ, տրանսուդատ, կրծքի կաթ, վերքային քսուք և այլն՝ բացառությամբ կղանքի նմուշի) մանրէաբանական հետազոտություն	1 նմուշ	4,500.0
56	Ախտահանիչ միջոցների նկատմամբ շրջանառող մանրէների զգայունության գնահատում (1 նմուշ (1 խտության)՝ 1 մանրէային կուլտուրայի նկատմամբ)	1 նմուշ / 1 հետազոտություն	13,600.0

	Քիմիական, ճառագայթաբանական և թունաբանական հետազոտություններ	-	-
57	Ջրի հոտի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	600.0
58	Խմելու ջրի համի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	800.0
59	Ջրի գույնի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	2,300.0
60	Ջրի պղտորության հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	1,200.0
61	Ջրի PH-ի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	3,100.0
62	Ջրի մնացորդային ազատ քլորի հետազոտություն 1	1 նմուշ / 1 հետազոտություն	1,400.0
63	Ջրի մնացորդային ազատ քլորի հետազոտություն 2	1 նմուշ / 1 հետազոտություն	1,500.0
64	Ջրի մնացորդային ընդհանուր քլորի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	9,100.0
65	Ջրի պերմանգանատային օքսիդացման հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	800.0
66	Ջրում սնդիկի հետազոտություն 1	1 նմուշ / 1 հետազոտություն	10,100.0
67	Ջրում սնդիկի հետազոտություն 2	1 նմուշ / 1 հետազոտություն	7,200.0
68	Ջրում տոքսիկ տարրերի և ծանր մետաղների հետազոտություն ԱԱՍ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	6,800.0
69	Ջրում արսենի, սելենի և անագի հետազոտություն ԱԱՍ հիդրիդային գեներացիայի մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	4,400.0
70	Ջրում ընդհանուր ալֆա ակտիվություն	1 նմուշ / 1 հետազոտություն	8,900.0
71	Ջրում ընդհանուր բետա ակտիվություն	1 նմուշ / 1 հետազոտություն	8,900.0
72	Պարենային հումքի/սննդամթերքի և շինանյութի հետազոտություն ռադիոակտիվ Ցեզիում-137-ի նկատմամբ	1 նմուշ / 1 հետազոտություն	5,600.0
73	Պարենային հումքի/սննդամթերքի հետազոտություն ռադիոակտիվ Ստրոնցիում-90-ի նկատմամբ	1 նմուշ / 1 հետազոտություն	11,500.0
74	Ջրում երկաթի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	8,400.0
75	Ջրում բորի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4,600.0
76	Ջրում ամոնիում իոնի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	2,700.0
77	Ջրում նիտրատների հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	3,900.0
78	Ջրում նիտրիտների հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	3,700.0
79	Ջրում քլորիդների հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	6,500.0
80	Ջրում սուլֆատների հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	3,200.0
81	Ջրում հանքայնացման/չոր մանցորդի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	7,500.0
82	Ջրում կոշտության որոշում	1 նմուշ / 1 հետազոտություն	1,700.0
83	Ջրում ցիանիդների հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	14,600.0
84	Ջրում ֆտորիդների հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	6,300.0
85	Ջրում ֆենոլային ինդեքսի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	37,500.0
86	Ջրում նավթամթերքների/քսիլոլներ, բենզոլ, տոլուոլ/ հետազոտություն (բոլոր ռուսաստանյան միաստանային մեթոդներով)	1 նմուշ / 1 հետազոտություն	29,400.0

87	Ջրում նավթամթերքների/քսիլոլներ, բենզոլ, տոլուոլ/ հետազոտություն	1 նմուշ / 1 ցուցանիշ	10,000.0
88	Ջրում մակերեսային ակտիվ նյութերի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4,200.0
89	Ջրի թթվածնի քիմիական պահանջի հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	7,000.0
90	Ջրի թթվածնի կենսաբանական պահանջ 5-ի հետազոտություն /ԹԿՊ5/	1 նմուշ / 1 հետազոտություն	10,500.0
91	Ջրի թթվածնի կենսաբանական պահանջ 20-ի հետազոտություն /ԹԿՊ20/կիրառելի է 10 նմուշի միանգամա հետազոտության համար	1 նմուշ / 1 հետազոտություն	16,400.0
